# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 112

«28» 11 2022թ. գ. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Դմիտրիի Չիչոյանին Շիրակի մարզի դատախազի պաշտոնին փոխադրելու և Ռաֆայել Մանուկյանին Արարատի մարզի դատախազի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 18.11.2022թ. N 439-Ա և 23.11.2022թ. N 452-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Արարատի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Կատարել Ա.Չիչոյանի կողմից՝ Արարատի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ռ.Մանուկյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

***Հանձնախմբի անդամներ՝***

Կարապետյան Արմեն - Արարատի մարզի դատախազի տեղակալ,

| | |
|---|---|
| Մարտիրոսյան Հայկ - | ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ, |
| Նազարեթյան Արմինե - | ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ, |
| Ղահրամանյան Մարուշ - | ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, |
| Գևորգյան Թամարա - | ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար, |
| Ոսկանյան Օդեթ - | Արարատի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 8-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ